

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՍԿՁԲԱՆԷ ՄԻՆՁ

ՏՄԵՐՇԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիար Բասմաշեան 1902ին « Բանասեր » քին մէջ հրատարակեց հայ նախարարութեանց լիակատար ցանկն՝ որոց մի մասն յաջողած էր գտնաւ սեպածն արձանագրութեանց մէջ :

Խալիզեանք էին բարձրահասակ, հուժկու, աշխատասէր, քաջամարտիկ և յանդուգն ի պատերազմի: Ժողովուրդն էր երկրագործ և կենդանարոյժ: Գիտէին լաւ մշակել հողն՝ և առատ հունձերը յառաջ բերել: հմուտ էին ողողման օրինաց և ջրմուղիներու միջոցաւ հեռուներէն ջուր բերելու արուեստին, առ այս ապացոյց են Արտամէտի, Բերկրիի, Արծուարերդի, Մանազկերտի և Խոտորջուրի ջրմուղիներն: Խաշնարած էին. ամառն իրենց հօտերով մարգերն կը շրջէին, լաւ ձիեր ու էջեր ալ կը բուծանէին: Ասորեստանեայց միշտ ձիու և էջի տուրք կը զնէին Խալիզեանց վրայ:

Նախահայր Ասորեստանեայց նման կը ճանաչէին մետաղներն, անոնցմով զէնքեր, զարդեր, բաժակներ ու արձաններ կը պատրաստէին, զորս ճարպիկօրէն կը նկարէին. գիտէին կերպասներ հիւսել:

Փազաքներն ամուր տեղեր և կամ լեռանց բարձրերն կը հաստատէին: Փազաքներն փոքր էին և երկայն քառանկիւնի ձևով, պարիսպներն առանց շաղախի՝ քարերն կարգաւ ու արուեստիւ զետեղմամբ հիւսուած էին, քառանկիւն աշտարակներ կը կրէին և տկարագոյն մասանց առջև պատնէշներ (braie) կը շինէին:

Հաւանականաբար հմուտ էին լծակ, ճախարակ և գլան գործածել ի պէտս շինութեանց: Քարաժայռից մէջ սենեակներ կը փորէին՝ որք ըստ ոմանց արքայից զանձարաններ կամ ապաստարաններ էին և ըստ այլոց զերգմաններ: Ճարտարապետութեան և քանդակագործութեան մա-

սին շատ ետ մնացած ըլլալ կը թուին՝ իրենց դրացի Ասորեստանեայց բաղդատմամբ:

Տուներն քառանկիւն էին, և քարէ կամ աղիւսէ պատերով շրջապատուած, վերն երդիք մ'ունէին ընդհանրապէս տափարակ, մերթ՝ շեղ:

Արքայական պալատներն մեծ էին, ճակատն սիւներու շարք մը կը կրէր, և զարդարուած էր մետաղեայ նկարուն վահաններով ու սկուտեղներով: Սրահներու ներքին երեսներն արձանագրութիւն կրող քարերով պատեալ էին: Տաճարներն արտաքուտ աւելի կանոնաւոր կ'երևէին, որմերն աւելի արուեստիւ հիւսուած էին, գաւիթն լիքն էր պղինձեայ արձաններով: Անոց կը գտնուէին խորաններ, նուիրարութեան քարեր, մարդոց ու կենդանեաց կուռքեր:

Յ. Արմենկերտ ի Մեծ Հայս մուտքն ու տեղեց ազդեցութիւն. — Փոխգահան Արմէն ցեղի մուտքն 675ի առեմներն տեղի ունեցած համարելով՝ անոնց ազդեցութիւնն մինչ 610 թուականն պիտի քննեմք աստ. զի այն առեմ Մար—Պարսկական իշխանութեան տակ մտած ըլլալով՝ մեր բնագաւառն՝ անոնց քաղաքակրթութեան ազդեցութիւնն սկսած է: Վերջ կոյս այս շրջանի տեղի ունեցած Ալիւթացոց տիրապետութիւնն նկատի չպիտի առնեմք, զի ինչպէս տեսանք, սոքա հեղեղի մը պէս եկան՝ ու քանի մը տարիէն զացին, հաւանականաբար առանց մեծ ազդեցութիւն ներգործելու, և եթէ անոնցմէ երկրին մէջ մնացողներ եղան՝ որպէս հաւանական է՝ անոնք ալ անշուշտ համակերպեցան ու ընդունեցին երկրին քաղաքակրթութիւնն՝ քան թէ իրենց անոնց տալ փորձեցին:

Գալով Արևմտից եկող Արմէններուն, սոքա մեծ յեղափոխութիւն մը յառաջ չ'երբին, զի մուտքերնին հանդարտ էր և տեղական իշխանութիւնն արդէն տկարացած ըլլալով մեծ ընդդիմութիւն չ'արարց: Երիվիտա չունի որ և է արձանագրութիւն, զի չունի պատմելու արժանի գործ:

Յաջորդներն Ուրաս Գ. և Սարիգուրիս Գ. երկրի բարեկարգութիւնն հաստատել կը ճգնին, և զգալով տկարութիւննին՝ իրենց երբեմնի ախոյեան Ասորեստանեայց արքայից դեսպաններ ու նուէրներ զրկելով՝ կը դաշնակցին, կը բարեկամանան և անոնց օժանդակութեամբ կ'երազեն զօրացնել իրենց իշխանութիւնն. այլ ի զուր, զի Ասորեստանեայց ևս տկարացած էին ուստի և այս ճիգերն ի դերև ելան: Հուսկ ուրեմն Սկիւթական հեղեղն հասաւ, խալդեան իրքիաւի օրով, որ արդէն Եւրասիի ափունքն ամփոփուած էր, և այդ իշխանութիւնն բարձաւ ու սպա Մարաց լուծին տակ մտաւ այդ երկիրն, ունենալով իրեն ուրոյն կատարելի իշխաներն՝ որոց առաջինն Խորենացոյ Պարոյրն կը թուի, և հաւանականաբար Արմէն ցեղէն:

Աւորոտեաններէ շատեր՝ անշուշտ նեղուելով յարեմոսից եկող նորեկ տարրէն՝ սկսան դէպ ի հիւսիս ելնել ու կողկասի լեռնաշղթային ամրութեանց ապաւինել. սակայն ժողովրդեան մեծ մասն մնաց իր բնագաւառին մէջ և խառնուեցաւ եկ ժողովրդեան հետ:

Արմէններու զալուստէն վերջ իսկ՝ Նախահայ իշխանք շարունակեցին իրենց ազգային սեպածև գրեթով արձանագրութիւններն, ինչպէս իրքիաս, սակայն ապա այդ իշխանութեան բարձամար լքուեցան. հաւանականաբար սկսան գործածել Արմէններու փոխզական տառերն, սերեալ՝ ի փունիկականէ:

Մեր այս կարծիքն հաստատող զօրեղ ապացոյցներ՝ այսինքն գրական մնացորդներ՝ չունինք ի ձեռին, սակայն տրամաբանութիւնն կը ստիպէ զմզ հաւատալ նորա գոյութեան, զի հնար չէ որ այնչափ վաղու գրականութիւն ունեցող մի ազգութիւն՝ յանկարծ դարդրի ուրոյն գիր և դպրութիւն ունենալէ, մինչդեռ իր գրաբեր անգիր ազգեր իսկ մեծ ընդունելութիւն կ'ընէին փունիկ ծագմամբ այբուբենից և այնու գրականութեան կը սկսէին:

Այս գրերն ապրած են և յաջորդ շրջանին. արգարև Քրիստոսէ 4 դար առաջ՝

Արևմտեան Հայոց վրայ իշխող Տրիբաւ կառավարչին դրամներն՝ այս փունիկ փոխզական գրերն կը կրեն:

Այս տառերն եթէ ոչ ի ժողովրդեան՝ զոնէ ի մեհեանս ի գործածութեան էին, Արշակունի հարստութեան առաջին շրջանին ալ հաւանականաբար կը գործածուէին այս տառերն: Ըստ Բ. դարու յոյն պատմիչ Փիլոստրատոսի՝ Արշակ թագաւորն Հայոց (հաւանականաբար նախորդն Մեծին Տիրանի հօր) ինձ մը բռնելով՝ զայն նիւսիս Աստուծոյն նուիրեց և կենդանւոյն պարանոցն անցնել տալով ոսկի մանեակ մը՝ վրան գրեց հայ տառերով՝ «Արշակ թագաւորն Հայոց՝ Աստուծոյն նիւսիս»: Այդ յոյն պատմիչի հայ տառեր անուանածն՝ հաւանականաբար այս փոխզական գրերն էին:

Ե. դարու հայ պատմիչք Դանիէլեոս գրերոս ի ձեռն Մեսրոպայ գիւտի մասին խօսելով կ'ըսեն թէ՝ դոքս նոր լնն, այլ երբևէ ի կիր արկնայ և յարձի բողի և զած գրեր (կորիւն, Խորենացի, Փարպեցի), և որք անշուշտ այս փոխզական գրերն կ'ակնարկեն:

Ազգային պատմիչք այս հինաւուրց գրերն Դանիէլեոս տառեր կ'անուանեն, զի ի սկիզբն Ե. դարու Դանիէլ անուն մի եպիսկոպոսի քով գտաւ Մեսրոպ՝:

Այս գրերու թիւն հաւանականաբար փունիկ գրոց քանակաւ 22էր՝ և բնականաբար ներկայ այբուբենի մէջ մտատւորագոյն հնչում ունեցող գրերն որպէս՝ բ. ո. գ. կ. չ. ջ. ճ. ևն. մէկ գրով միայն ներկայացեալ էին, և կարելի է խազերով ու պայմանական նշաններով, միևնոյն գրերու աւելի նուրբ կամ խիստ արժէք տալով՝ կը բաւականանային, զօրս Մեսրոպ երկու տարի գործածելէ հտը կատարելագործեց դրացի ազգերէ գրեր առնելով:

Հաւանականաբար այս գրերն գործածուեցան մինչև Մակեդոնական տիրապետութիւնն՝ յորժամ յոյն գրերն մուտ գը-

1. Տնս «Երգութիւն հայ տառից» Տօթթ. Տաւաւարեան, Վիէննա, 1895:

տան ի մեզ, և միայն յազգային մեհեանս կը գործածուէին այս հինաւուրց տառերն՝ որք ապա ի սկիզբն Գ. դարու ընաջինջ եղան ի ձեռն Գրիգոր Լուսաւորչի:

4. Մար-Պարսիկ ազդեցութեան ժամանակ. — Յետ Նինուէի կործանման (608), կիրաքար կը տրիէ Հայոց, և ի ձեռն Պարոյր իշխանին կը կառավարէ զայնս: Կիրաքարի յաջորդաց օրով Հայք քանիցս ապստամբութեան փորձեր կ'ընեն և վերջապէս կիրսոսի լուծին տակ կը մտնեն: Վահագնի ապստամբութեան փորձերն յաջող ելք չեն ունենար և Հայք Պարսիկ իշխանապետութեան տակ կը մնան մինչ Աղեքսանդր Մակեդոնացին (331):

Մար-Պարսիկ տիրապետութեան այս երեք դարերն ունեցած են բաւական խոր ազդեցութիւն: Մարք և Պարսիկը համացեղ են ծննդեամբ, երկուքն ալ Արիական, որք և ապա կրկին իրարու հետ խառնուեցան և միեւնոյն քաղաքակրթութիւնն ունէին:

Պարսիկը՝ ինչպէս առիթ ունեցանք ըսելու՝ յաւուրս Գարեհ Վշտասպեանի Ասորաբարելացոց գրութիւնն առին, ու այդ սեպարիբերու ոմանց տառական արժէք տալով՝ այրորենարան մ' ունեցան, ու այդ գրերով գրականութիւն մը մշակեցին, որ տեղեց մինչև Աղեքսանդրի տիրապետութիւնն. թէպէտ Աղշակունի Պարթևք կը գործածեն զայնս մինչ Գրիստոսի Ա. դարն՝ իրենց երկրին մէջ (Պարթևաստան):

Այս այրորեական սեպածե գրերով Գնեքըսե՝ Վանայ քարաժայռին վրայ դրոշմել տուած է եռալեզուեան (Պարսիկ, Մար և Բարեւական) արձանագրութեան պարսկերէնի մասն, սակայն հայ լեզուի համար գործածուած ըլլալու ապացոյցն չ'ունիմք ց'արդ:

Տիր բասմաշեան կը կարծէ թէ հայ այրուքէն՝ այդ պարսիկ սեպածե գրերէն սերած է՝. մենք փորագական տառերէն յատալ եկած կ'ենթադրեմք որպէս առիթ ունեցանք ըսելու:

Ըստ Գնեքեփոնի՝ իր ժամանակն (401) պարսիկ լեզուն շատ ընդհանրացած էր ի Հայս և գրեթէ ամեն ոք կը հասկնար:

Այս աստեղներն արդէն բանաստեղծութիւնն զարգացեալ էր ի Պարսիկս, որոյ ապացոյց են Շահնամներն, և որ մեծապէս ազդած է մեր նախահայրք վրայ:

Պարսից կրօնն նախ պարզ էր: Երկնից կամարն կը պաշտէին իբր գերազայն Աստուած, սակայն ապա Չրադաշտական եղան Գրիստոսէ վեց դար առաջ, ընդունելով բարու և շարի սկզբունքներն. կրօն՝ որ ապա անցաւ դրացի ազգաց, որպէս և Հայոց՝:

Հայք այս ժամանակամիջոցին Չրադաշտականք էին, Գարեհ Վշտասպեանի և Գնեքըսէի արձանագրութեանց մէջ Հայք Զանդիկ կրօնիւ ազգաց կարգն յիշատակուած են:

Պարսիկը ի Սկիթացոց առին և Տարապաշտութիւնն և մանաւանդ կրակի պաշտօնն, որոց հետեւեցան և Հայք: Պարսիկը ոչ տաճար ունէին և ոչ արձան, բացօթեայ կը կառարէին իրենց կրօնական արարողութիւններն. գիտէին սակայն կառուցանել գեղեցիկ պալատներ և դամբարաններ: Իրենց ճարտարապետութեան ուսուցիչք Ասորեստանեայք եղած են, սակայն իրենք գիտցած են այդ արուեստն իւրացնել՝ և ճարտարապետական ուրոյն ոճ մ' ունենալ: Այս պարսիկ ճարտարապետութիւնն մեծապէս ազդած է իրենց տիրապետութեան ժամանակամիջոցին Հայոց շինութեանց վրայ:

Պարսիկը ճանապարհներու ցանց մը

1. Տե՛ս Բասմաշեան Ն/17 Մայիս 1880ին առ Փրիսթրիկ Միլլէտ մեծանուն լեզուագէտ և ուսուցիչն Վիեննայի համալսարին գրած նամակն, հրատարակեալ ի «Քազմապէպ Հանդիսին 1908 Նոյեմբերի թուոյն»:

2. Ի մասին Չրադաշտական կրօնի տես ի մէջ այլոց մեր «Հայոց հին կրօններն» «Քանասէր» 1903, Փարիզ. որոյ Բ. տրպն Մամոյ տակ է:

հաստատած էին իրենց կայսրութեան ամեն կողմն, և ընդ երկարութեան ճանապարհաց օթևաններ շինուած էին, ի պէտս ճանապարհորդաց և վաճառականութեան: Ամեն կողմ թղթատարական հաստատութիւններ կային և կանոնաւոր սուրհանդակներ կ'երթեկէին:

Հայաստան ոչ միայն ունեցաւ այլ և պահեց այդ հաղորդակցութեան միջոցներն, զորս կը հաստատեմք և Արշակունեաց օրով:

Ըստ մեր Պատմահօր՝ Տիգրան Երուանդեան հայկական բանակն զարգացուց, երկրագործութեան և վաճառականութեան մեծապէս նպաստեց:

Քանենփոն զՀայս հովիւ (կենդանարոյծ) և երկրագործ կ'անուանէ: Հայք կը բուծանէին ձի, եզ, կով, ոչխար, այծ զորս կը սնուցանէին խոտով: Իրենց գետնափոր տուներու մէջ ունէին ցորենի և գարիի լեցուն ամբարանոցներ, ունդեղէններ, որպէս նաև զինի, չամիչ, զանազան իւղեր, խոզի ճարպ, բոյսերէ հանուած իւղեր ու ոգիներ, և զիտէին պատրաստել զարեջուր:

Մշոյ դաշտին մէջ երկրագործութիւնն շատ զարգացած էր, որով և մշակ (մշեցի) անուանուան երկրագործաց (Պարագաշ): Այս շրջանին մէջ մշակութիւնն յարգի էր ի Հայս: Շիրակայ գաւառի յուրթի բարբերութիւնն առածի կարգ անցած էր: Հայաստանի գինին և ձիազգիներն անուանի էին և արտածութեան առարկայ:

Հայք իրենց ձիերով և ջորիներով Տիւրքոսի հրապարակը կը լեցնէին (Եզեկիէլ իՆ. 14 600 Ն. Ք.): Պարսից՝ տարին 20,000 ձիու տուրը կուտային, որ սահմանեալ էր Միւր Աստուծոյն զոհի համար՝ հաւանականաբար և բանակին: Հետզոտտ կը յիշատակէ Հայոց՝ Բարբելոնի հետ ունեցած վաճառականութիւնը, կը նկարագրէ Հայոց նաւերն, որք ձուածէ էին՝ ուսնիի ճիւղերով կազմուած, մորթով պատուած, յատակն յարդ կը լեցնէին, երկու թիավարք կը վարէին, և առ նուագն մէկ էջ կ'ուսնեային: Այսպէս Տիգրիսէն

և Եփրատէն կ'իջնէին Բարբելոն, հոն ապրանքը կը պարպէին, նաև կ'աւելին, կազմածի փայտն կը ծախէին և մորթերն իշուն բեռնեկով՝ կը վերադառնային: Այս նաւերն մինչ 50,000 տաղանդ (100,000 ըլլօկրամ) կը տանէին: Հայք Բարբելոն կը զրկէին նա մանաւանդ գինի:

Այս շրջանին մէջ Հայք ոչ միայն Եփրատի և Տիգրիսի միջոցաւ մինչև Պարսից ծոցն կ'երթային՝ այլ և Արևելքէն Արաքսի և Կուրի միջոցաւ Կասպից ծովն հասնէին, և Իքսոս ու Յաքարտէս գետերու միջոցաւ կը մտնէին ի Բագտրիա, ի Սորտիանիա, ի Պարթևս, և նոյն խկ ի Հնդկա (Malte-Brun géographie):

Կիւրոս Հայոց և Կորդուաց զինաց իր ի Հնդկա զրկած պատգամաւորներն առաջնորդեցելու համար (Քսեն.), զի վաճառականութեամբ ծանօթ էին այդ ճանապարհաց:

Ծ. Յունական ազդեցութեան ժամանակ. — Աղեքսանդր Մակեդոնացոյ տիրապետութեամբ կը սկսի այս շրջանն, որոյ մահուամբ Հայաստան Սելևկեանց բաժին ինկաւ, որ երկու իշխաններով (ընդհանրապէս հայազգի) կը կառավարէին, և վերջապէս ըստ նորագոյն ուսումնասիրութեանց Արտաքսիաս հաստատեց ի Մեծ Հայս մի ազգային թագաւորութիւն (189), Այշակունի անուամբ, որով և վերջ կը գտնէ այս շրջանն:

Մակեդոնացիք և Սելևկեանք յոյն քաղաքակրթութեան հետևողներ էին, առ այս ներկայ շրջանն Յունական ազդեցութեան շրջան անուանեցինք:

Այս շրջանին մէջ Հայք շատ հաւատարիմ մնացին իրենց Զրադաշտական կրօնին, ապա յոյն քաղաքակրթութեան ազդեցութեան տակ՝ որոց հետեւած էին և այդ ժամանակի շրջակայ ազգերն՝ սկսան կուպաշտական հակումներ ունենալ, այսպէս ունեցան Արեգական և Լուսնի ներկայացուցիչ պատկերներ, և Աւետայի սրբութիւններն: Ահուրամազդայ, Անահիտայ, Միհրի, Տիշտրիայ, արձաններով ներկաւ

յացուցին, Արամազդ, Անահիտ, Միհր և Տիր անուանց տակ։ Գրացիներուն նըման ունեցան իրենց գեղեցկութեան Աստուածուհին (Աստղիկ), որդեգրեցին հետզհետէ Ասորոց Կանէն և Քարչափնն և իրենց քաջարի նախնիքներ աստուածայուցին, որպէս Վահագն՝ Հաւանականաբար այս շրջանին մէջ կռապաշտական հակում մ'էր միայն գոյութիւն ունեցածն, և ապա Արշակունի անուանեալ շրջանին մէջ թուրովին կռապաշտական եղաւ ։ կռապաշտական հակումն աւելի Արեւտեան Հայոց մէջ յառաջ գացած էր, ուր էին և կռապաշտական կրօնի կեդրոններն քան յարեւելս ։

Տիրան, Տիրքան, Տիրիթ, Տրդատ անուանց մէջ Տիր Աստուծոյն հետքն կայ, գուցէ և անկէ է Տիր բառն ։

Եոյն լեզուն իր ժամանակի քաղաքակրթութեան բարբառն սկսաւ գործածուիլ և ի Հայս, գոնէ զարգացելոց կողմանէ՝, որով և Յոյն գրականութիւնն, որոյ հետևանօք անշուշտ լըուեցաւ փիւնիկ սերմամբ Փոսիգական տառերու գործածութիւնն, և գուցէ միայն մեհենական գրութեանց կը գործածուէր։ Ժողովուրդն ի կիր կ'արականէր յոյն տառերն որ միևնոյն ծագումն ունէին և աւելի յարմար էին յունական լեզուին։ Գծարդարար այս շրջանի յատուկ որ և է գրական բեկոր հասած չէ մեզ ։

Գուցէ իրաց այս վիճակն շարունակուեցաւ մինչ ծաւալումն Քրիստոնէութեան ի Հայս և Ազաթանդեզոս յոյն տառերով և հայ բարբառով գրած է իր գործն ։

Այս շրջանին մէջ անշուշտ մուտք զտնել սկսած ի մեզ յոյն բառեր, յոյն քերականի ձևեր և ի մի բան յունարանութիւն։ Յունարէնն քիչ վերջ կ'ըլլայ երկրի գրական լեզուն և Տիրքան Մեծի զաւակն Արտաւազդ՝ այդ լեզուով ողբերգութիւններ

կը գրէ (Պուտարբոս)։ Երկրագործութիւնն և վաճառականութիւնն նախորդ շրջանի վիճակն ունէին ։

Յունական արհեստք և գեղարուեստք մեծ ներգործութիւն ըրած չեն թուիր այս ժամանակամիջոցին ։

Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

Վ Ե Ր Ջ



ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻՈՅ ՄԱՍԻՆ

Ա. Արշաժ

Ա. — Իջ 47. « Եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն և հռատորական յորդասաց յայտնարանօրեան » ։ Ուղղոր էք « աստնարանութեան » . հաւանական թուի, որում կարէ ոյժ տալ խորինացոյ գովեստը Ս. Սահակի ճարտարիտութեան . « Տիացեալ պակեալ ինքնին թագաւորն... իբր քաջախօսի և ուժգնասարտի ատն համարձակախօսի » էջ 536. (տպ. վիճեաւ. ՌՄԼԶ) ։

Բ. — Իջ 549. « Այլ ձեր բագ այնպէս արարին, զի գնդին Հայոց այրենտիր որեաքն այլուր դիպեցան ի գործ » . Գուց ուղղոր էք « Այլ ձեռքրայի » . ինձ թուի որ ոչ է ըստ տեղին ուղղագրութիւնդ. վասն զի « ձեր բագ » բացատրութիւնն է յատուկ ոճ արեւելեան խօսից, որով Միհրան պատուախրական գովեստ կու տայ Վաղարշին, թէ ձեր թագի այսինքն աստուծային շնորհիւ Հայոց գնդի այրենտիր զօրքը, ուրիշ տեղ գտնուեցաւ, ապա թէ ոչ փոխանակ Վահանայ փոքր գնդի տուած մեծ քնասին, նոքա կատարեալ յաղթութիւն կը տանէին ։

Գ. — Իջ 246. « Հայթայթանս իմն առ չարի և սուգ պատճառանաց մեծի և անաւոր հասելոյ տրտմութեան հաշուէին » . Գուց ուղղոր էք « Հայթայթանս իմն առ յատոյ »... ։ Այս և ուղղութիւն չէ ըստ իմաստին ։ Ստան զի Հմայիկի մահը մեծ չարի և սուգի պատճառ եղաւ իւր գնդին, « որք իբրև տեսանէին զբոսն՝ ի սուգ մեծ մտեալ ի վայր կործանէին, չունենով ա-

1. Ըստ Յերոնիմոսի՝ յոյն լեզուն ընդհանրացած էր այս կողմերն, բացի Գաղատիոյ՝ չկար երկրի որ չխօսուէր յունարէնս ։